



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՉԸ ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ, ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 08.10.2020թ.

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը Թուրքիայի գործուն և բացահայտ օժանդակությամբ և վարձկան ահաբեկիչների ակտիվ ներգրավմամբ ռազմական հարձակում է սկսել Արցախի Հանրապետության (նախկինում հայտնի որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) նկատմամբ՝ թիրախավորելով խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը, մշակութային կենտրոնը՝ Շուշին, ինչպես նաև այլ բնակավայրեր: Հարձակման է ենթարկվել նաև Հայաստանի Հանրապետությունը: Այժմ համառոտ ներկայացնում ենք Արցախի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում տիրող իրավիճակն ըստ փաստերի.

* * *

1. Պատերազմ կամ ռազմական գործողություններ նախաձեռնող կողմը

Ադրբեջանը դեռևս 24.09.2020թ. առանց ռազմական դրությունը հայտարարելու սկսել է հավաքագրել պահեստազորային զինձառայողներին, իսկ 21.09.2020թ. ոստիկանությունը հավաքագրել է ադրբեջանցիներին պատկանող ամենագնաց տեսակի մեքենաները՝ ռազմական նպատակներով դրանք տեղափոխելով առանձին ավտոկայանատեղի:¹

Այն, որ Ադրբեջանն է սկսել հարձակումը, անուղղակիորեն ընդունել է նաև Ադրբեջանի նախագահը իր հարցազրույցներից մեկում նշելով, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունն այն մասին, որ Արցախը Հայաստան է և վերջ, ինչի արդյունքում ինչ բանակցային գործընթացի մասին կարելի է խոսել?:

Այս պատերազմը սանձազերծելը ոչ միայն զուտ տարածքային խնդիր է, այլ նաև հետևանք է թուրքերի և ադրբեջանցիների կողմից հայատյացության դարավոր քարոզի: Ընդամենը տարիներ առաջ խաղաղ պայմաններում քնած հային սպանելու համար Ադրբեջանը պաշտոնապես «պարգևատրեց» մարդասպանին, 2016թ. ապրիլյան պատերազմի ժամանակ իր կողմից

¹ <https://www.bbc.com/russian/news-54282373?fbclid=IwAR0GBUkECwmCp1r3Wv10yDeELEK-17ul7SLJCI3SddNAkwPhW7bKR02AvGA>

² https://www.youtube.com/watch?v=cb6-L_SekyY 5:50

գլխատված զինվոր Քյարամ Սլոյանի գլուխը պտտում էին Ադրբեջանի գյուղերում: Այսպիսի սարսափազդու դեպքերը բազմաթիվ են և բնութագրում են Ադրբեջանի և թուրք ազգի մոտեցումը քրիստոնյա հայերի նկատմամբ:

Ադրբեջանի կողմից պատերազմ սկսելու փաստն արձանագրել են նաև մի շարք արտասահմանյան լրատվամիջոցներ³:

Ադրբեջանի հակահայկական քարոզչության և այլ խախտումների վերաբերյալ տեղեկություններին կարելի է ծանոթանալ նաև այս հղումներով՝

Հայերեն լեզվով հղումը՝

http://advocates.am/images/library/Opinion_on_Artsakh_conflict_2017_arm.pdf

Անգլերեն լեզվով հղումը՝

http://advocates.am/images/library/Opinion_on_Artsakh_conflict_2017_eng.pdf

* * *

2. Ադրբեջանի կողմից վարձկանների ներգրավումը ընդդեմ քրիստոնյա հայ ժողովրդի

Ադրբեջանն իր սանձազերծած ռազմական գործողություններն իրականացնում է վարձկանների միջոցով⁴ և դա այն դեպքում, երբ դեռևս 1997թ-ին վավերացրել է 04.12.1989թ. ընդունված Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և վերապատրաստման մասին միջազգային կոնվենցիան:

Նշված կոնվենցիայի 1-ին հոդվածը վարձկան է համարում այն անձին, ով՝

ա) *հատուկ հավաքագրվում է տեղական կամ արտասահմանյան զինված բախման մեջ պայքարելու համար.*

բ) *ռազմական գործողություններին մոտիվացված է մասնակցել հիմնականում մասնավոր շահից ելնելով և հակամարտության կողմերից մեկի կամ նրա անունից նրան խոստացվել է նյութական փոխհատուցում, որն էապես գերազանցում է կողմի զինված ուժերում նման կոչում և գործառույթներ իրականացնող անձանց վճարվող գումարից.*

գ) *ոչ հակամարտության կողմի ազգության ներկայացուցիչ է և ոչ էլ հակամարտության կողմի կողմից վերահսկվող փարածքի քաղաքացի.*

դ) *հակամարտության կողմերից մեկի զինված ուժերի անդամ չէ և*

ե) *չի ուղարկվել հակամարտության կողմ չհանդիսացող պետության կողմից, որպես վերջինիս զինված ուժերի անդամ իր պաշտոնական պարտականությունները կատարելով:*

Կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում է, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածով թվարկված անձանց հավաքագրումը, ֆինանսավորումը կամ

³ Կովկասում խորը սառեցված հակամարտությունը թեժացավ անցյալ շաբաթ, երբ Ադրբեջանը ռազմական արշավ սկսեց՝ հետ վերադարձնելու Լեռնային Ղարաբաղը՝ վիճահարույց տարածքը, որը տարիներ շարունակ գտնվում է հայկական ուժերի կողմում: https://www.dw.com/en/turkey-syrian-mercenaries-foreign-policy/a-55098604?fbclid=IwAR3u6TuvCuteclerqYAQ85C7a9gn_lho2xmhIZD36Qh5sNDY30R03MQCozk

⁴ <https://www.nzz.ch/international/konflikt-um-karabach-hunderte-soeldner-kaempfen-fuer-aserbajdschan-ld.1580214?reduced=true>

վերապատրաստումը համարվում է Կոնվենցիայի խախտում:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունները չպետք է հավաքագրեն, օգտագործեն, ֆինանսավորեն, վերապատրաստեն վարձկաններին և պետք է արգելեն այդպիսի գործողությունները Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

Հատկանշական է, որ նմանատիպ իրավական կարգավորում սահմանված է նաև Ադրբեջանի քրեական օրենսգրքում, որի 114-րդ հոդվածը սահմանում է՝ *Վարձկանությունը՝*

114.1 վարձկանների հավաքագրումը, ուսուցանումը, ֆինանսավորումը կամ այլ նյութական օժանդակությունը, ինչպես նաև նրա օգտագործումը զինված հակամարտությունում կամ ռազմական գործողություններում պատժվում է ազատազրկմամբ 8-12 տարի ժամկետով:

114.2 Նույն գործողությունը, որը կատարվում է պաշտոնական դիրքի օգտագործմամբ կամ անչափահասի նկատմամբ պատժվում է ազատազրկմամբ 9-15 տարի ժամկետով:

114.3 Վարձկանի կողմից զինված ընդարմանը կամ ռազմական գործողություններին մասնակցելը պատժվում է ազատազրկմամբ 5-11 տարի ժամկետով:

Նշված հոդվածը վարձկան է համարում Ադրբեջանի քաղաքացի չհանդիսացող, Ադրբեջանի տարածքում մշտապես չբնակվող, իր պաշտոնական պարտականությունների կատարման համար չուղարկված և նյութական օգուտ ստանալու նպատակով զինված ընդհարումներին և ռազմական գործողություններին մասնակցող անձին:

Վարձկանների ներգրավվումը Ադրբեջանում հանդիսանում է պատերազմական հանցագործություն:

Իհարկե, հրապարակված փաստերի համաձայն Թուրքիան է հավաքագրում վարձկաններին, նրանց վճարում է 1500-2000 դոլար ու ուղարկում Ադրբեջան՝ Արցախի դեմ հրահրված ռազմական գործողություններին մասնակցելու համար⁵:

Այդուհանդերձ, Ադրբեջանը չի կարող անտեղյակ լինել իր մոտ ուղարկվող վարձկաններից, քանի որ հենց երկրի ղեկավարին է բազմիցս լրագրողների կողմից ուղղվել վարձկանների վերաբերյալ հարցը և պաշտոնական մամուլը ողողված է վարձկանների մասին փաստերով՝ ներառյալ տեսագրություններով և հեռախոսազրույցների վերձանումներով: Ստացվում է, որ միայն այն փաստը, որ Ադրբեջանն ընդունում է Թուրքիայի կողմից հավաքագրվող վարձկաններին և ուղարկում նրանց մասնակցելու ռազմական գործողություններին արդեն իսկ թույլ է տալիս պատերազմական հանցագործություն՝ սահմանված թե՛ իր ներպետական օրենսդրությամբ, թե՛ իր կողմից ստանձնած միջազգային պարտավորություններով:

* * *

⁵ <https://www.dw.com/ru/dlja-chego-turcii-nuzhny-sirijskie-naemniki/a-55125445>

3. Ադրբեջանի կողմից ահաբեկիչ հանդիսացող վարձկանների ներգրավվումը ընդդեմ քրիստոնյա հայ ժողովրդի

Թուրքիան և Ադրբեջանը չեն սահմանափակվում միայն վարձկանների ներգրավվմամբ, այլ նրանք որպես վարձկաններ ներգրավվում են ահաբեկիչների, ինչն էլ ավելի է սրում հակամարտության լարվածությունը: Հայ 18-20 տարեկան զինվորների վրա, ըստ էության, դրվում է համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարելու առաքելություն, ինչն այսօր օրակարգային և խիստ դժվար լուծելի խնդիր է անգամ զարգացած և զարգացող պետությունների համար:

Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցող և առաջնագծում գտնվող տարբեր ահաբեկչական խմբավորումների վարձկան ահաբեկիչների վերաբերյալ արդեն իսկ առկա են հավաստի տեղեկություններ և մի շարք պետությունների, ինչպես օրինակ ՌԴ, Ֆրանսիայի, ԱՄՆ և Սիրիայի պաշտոնատար անձանց հավաստիացումները⁶:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը 01.10.2020թ. Բրյուսելում կայացած ԵՄ գագաթնաժողովին հայտարարել է, որ ֆրանսիական կողմն ապացույցներ ունի այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի մարտական գործողություններին Թուրքիայից բերված սիրիացի իսլամիստներ են մասնակցում: **«Մենք հստակ տեղեկություն ունենք, որը մատնանշում է, որ սիրիացի զինյալները հեռացել են Ղազխանթեպի մարտադաշտը՝ Ղարաբաղում մարտական գործողությունների միանալու համար: Սա շատ լուրջ է: Առաջիկա ժամերին մենք կքննարկենք դա»**, - ասել է Մակրոնը: Ֆրանսիայի նախագահն ընդգծել է, որ Լեռնային Ղարաբաղում իրավիճակը լուրջ է, և հնարավոր ամեն ինչ անելու է, որպեսզի կողմերը վերադառնան խաղաղ բանակցություններին: **«Մենք կանենք ամեն ինչ՝ մարտերը դադարեցնելու և խաղաղ ուղու վերադառնալու համար»**, - ասել է նա⁷:

Ռուսաստանի արտաքին հետախուզության ծառայության (ԱՀԾ) ղեկավար Սերգեյ Նարիշկինը 06.10.2020թ. հայտարարել է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտի ակտիվորեն մեկնում են Մերձավոր Արևելքում գործող ահաբեկչական կազմակերպությունների վարձկաններ: Նրանք ներկայացնում են «Ջեբհատ ան-Նուրան», «Ֆիրքատ ալ-Ամզա», «Սուլթան Մուրադ» խմբավորումները: **«Լեռնային Ղարաբաղի շփման գծում բախումներ նախկինում էլ են եղել: Իրավիճակի ներկայիս սրացումը մեծ մտահոգություն է առաջացնում ոչ միայն իր մասշտաբներով, այլև արտաքին գործոնների սկզբունքորեն նոր ազդեցությամբ: Ադրբեջանի կողմից Թուրքիան առաջին**

⁶ Տես՝ հղումները՝ https://www.ng.ru/armies/2020-09-01/5_7952_armenia.html;
<https://www.gazeta.ru/army/news/2020/07/19/14688493.shtml>; <https://ria.ru/20201002/boeviki-1578082665.html>; <https://armenpress.am/eng/news/1029822.html>;
<https://www.vedomosti.ru/politics/news/2020/09/30/841731-mid-rf-zayavil-o-perebroske-v-nagornii-karabah-inostrannih-naemnikov>; <https://www.dailymail.co.uk/news/article-8789027/Armenia-reveals-photo-plane-shot-Turkish-F-16-jet.html>; <https://ura.news/news/1052452847>;

⁷ <https://novayagazeta.ru/articles/2020/10/02/87340-v-boy-vstupayut-naemniki>

անգամ այդպես բացահայտ հանդես եկավ Ադրբեջանի կողմից: Բացի այդ, Ղարաբաղի զինված դիմակայությունը մագնիսի պես իր մոտ է ձգում տարբեր տեսակի միջազգային ահաբեկչական կառույցների գրոհայիններին»⁸:

Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը ՌԻԱ Նովոստիին տված հարցազրույցում ասել է, որ զինյալները տեղափոխվում են Լեռնային Ղարաբաղ, իսկ Դամասկոսը կարող է դա հաստատել⁹:

Սիրիացի Աբդուլան 30.09.2020թ. (անունը փոխված է՝ նրա խնդրանքով) BBC-ին պատմել է, որ 17-ից 30 տարեկան մի քանի հարյուր տղամարդ՝ Թուրքիայի և Սիրիայի հյուսիսում հակաասադական ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքների բնակիչներ, հավաքագրվել են «**թուրք զինվորականների և Սիրիական ազգային բանակի կողմից**»: Անցյալ չորեքշաբթի՝ մարտերի սկսվելուց չորս օր առաջ, նրանք ինքնաթիռներով փոխադրվել են Ադրբեջան և տեղակայվել հայերի դեմ դիմակայման գծի մերձակայքում: Աբդուլայի խոսքով՝ արդեն սեպտեմբերի 27-ին իրեն ու իր ընկերներին տարել են առաջնագիծ, որտեղ իրենք ընկել են կրակի տակ ու կորուստներ են կրել: չորս սիրիացիներ զոհվել են: Այն հենակետում, որտեղ նրանք տեղակայված են եղել, Աբդուլան տասնյակ հայրենակիցների դիակներ է տեսել, մոտավորապես յոթանասուն հոգի էլ վիրավոր է եղել: Ընդ որում՝ BBC-ի զրուցակիցը հավաստիացրել է, որ Ադրբեջան փոխադրված սիրիացիների մեծ մասը Ասադի դեմ մարտերում կոփված մարտիկներ չեն, այլ խաղաղ, չվարժված քաղաքացիներ, և նրանք արդեն իսկ առաջին կորուստներից հետո խնդրել են իրենց ետ տանել, բայց նրանց թույլ չեն տալիս ու սպառնում են բանտ նետել¹⁰:

16.05.2005 Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունվել է Ահաբեկչության կանխարգելման մասին կոնվենցիան, որի 15-րդ հոդվածը սահմանում է՝

1. Ստանալով տեղեկատվություն այն մասին, որ անձը, որը կատարել է սույն Կոնվենցիայում հիշատակված հանցագործություն կամ կասկածվում է այն կատարելու մեջ, կարող է գտնվել իր տարածքում, Կողմը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել տեղեկատվության մեջ պարունակվող փաստերը ներպետական օրենքի ներքո հետաքննելու համար:

2. Համոզվելով հանգամանքների հիմնավորվածության մեջ՝ այն Կողմը, որի տարածքում գտնվում է հանցագործը կամ կասկածյալը, պետք է, ազգային օրենսդրության համաձայն, ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ հետաքննության կամ հանձնման նպատակով այդ անձի ներկայությունը երաշխավորելու համար¹¹:

⁸ <http://www.svr.gov.ru/smi/2020/10/o-situatsii-vokrug-nagornogo-karabakha.htm>

⁹ <https://ria.ru/20201006/karabakh-1578360646.html> առկա է նաև տեսանյութը

¹⁰ [https://www.bbc.com/russian/features-](https://www.bbc.com/russian/features-54348623?fbclid=IwAR2tIQp8k3ghM9AHSol2Gh3tPx4yBXOI5mgM8ZMO IQN6QIRmHSD0e28CY4)

[54348623?fbclid=IwAR2tIQp8k3ghM9AHSol2Gh3tPx4yBXOI5mgM8ZMO IQN6QIRmHSD0e28CY4](https://www.bbc.com/russian/features-54348623?fbclid=IwAR2tIQp8k3ghM9AHSol2Gh3tPx4yBXOI5mgM8ZMO IQN6QIRmHSD0e28CY4)

¹¹ Ադրբեջանը վավերացրել է այս Կոնվենցիան և երկրի ղեկավարի մակարդակով տեղյակ է իր տարածք ահաբեկիչներ բերվելու մասին, սակայն ոչ միայն որևէ գործողություն չի կատարում իր տարածքից Սիրիայից, Աֆղանստանից, Ռուսաստանից և այլ պետություններից բերված

Ամփոփելով վերոգրյալը փաստվում է, որ Ադրբեջանը և Թուրքիան Արցախի Հանրապետության մատույցներում ահաբեկչական խմբավորումների որջ են ձևավորում և ահաբեկիչների միջոցով փորձում ոչնչացնել հայ զինվորին և հայ ազգին:

* * *

4. Ադրբեջանի կողմից խաղաղ բնակչության, այդ թվում նաև լրագրողների թիրախավորված գնդակոծումը, ինչպես նաև մշակութային արժեքների թիրախավորված ոչնչացումը

Առկա են բացահայտ փաստեր այն մասին, որ Ադրբեջանը թիրախավորել է Արցախի բնակավայրերը և խաղաղ բնակչությանը, այդ թվում նաև լրագրողներին: Ադրբեջանի ռազմական գործողությունների արդյունքում արձանագրվել են զոհեր և վիրավորվածներ խաղաղ բնակիչների (ներառյալ՝ տեղական և արտասահմանյան լրագրողների) շրջանում, առկա են քաղաքացիական ենթակառուցվածքների, բնակելի տների, ուսումնական հաստատությունների, մշակութային կենտրոնների, հումանիտար կառույցներ՝ փրկարար ծառայության կենտրոնակայանի ավերվածություններ՝ ումբակոծությունների միջոցով: Անգամ Կարմիր խաչի գրասենյակի կողքին են եղել ումբակոծությունների հետևանքով մնացած արկեր:

Ա. 12.08.1949թ. Ժնևում ստորագրված և Ադրբեջանի կողմից վավերացված Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածը սահմանում է՝ *Այն զինված կոնֆլիկտի դեպքում, որը չի կրում միջազգային բնույթ և ծագել է բարձր պայմանավորված կողմերից մեկի տարածքում, ապա կոնֆլիկտի մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ պարտավոր կլինի որպես նվազագույն կիրառել հետևյալ դրույթները. Անձինք, որոնք անմիջականորեն մասնակցություն չեն ունենում ռազմական գործողություններին, ներառյալ զինված ուժերի կողմից այն անձինք, ովքեր զենքը ցած են դրել, ինչպես նաև նրանք, ովքեր ռազմական գործողություններին մասնակցելուց դադարել են հիվանդության հետևանքով, պետք է բոլոր հանգամանքներում օգտվեն մարդասիրական վարվելակերպից՝ առանց որևէ խտրականության ռասայի, կաշվի գույնի, կրոնի կամ հավատի, սեռի, ծագման կամ գույքային դրության կամ ցանկացած այլ համանման չափանիշների պատճառներով:*

Այդ նպատակով վերը նշված անձանց նկատմամբ արգելվում են մշտապես ու ամենուրեք կարգելվեն հետևյալ գործողությունները. *ա/ ուրնձգությունը կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության հանդեպ, մասնավորապես, սպանության, խեղության ամեն մի տեսակը, դաժան վերաբերմունքը, փանջահարությունները և խոշտանգումները*

Բ. 1907թ. հոկտեմբերի 18-ին Հաագայում ստորագրվել է Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին կոնվենցիան, որի 25-րդ հոդվածը սահմանում է՝ **Արգելվում է հարձակվել կամ որևէ ձևով ուժակոծել չպաշտպանված քաղաքները, գյուղերը, բնակավայրերը և կառույցները:**

Գ. 09.12.1999թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվել է Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիան, որի 2-րդ հոդվածը սահմանում է՝ ***Սույն Կոնվենցիայի իմաստով հանցագործություն կատարած անձ է համարվում այն անձը, որը որևէ ձևով՝ ուղղակիորեն կամ անուղղակի, ապօրինի և կամովին միջոցներ է հավաքում կամ տրամադրում, որոնք կօգտագործվեն, կամ գիտակցում է, որ կօգտագործվեն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ կատարելու համար.***

ա) արարք, որը Կոնվենցիայի հավելվածում թվարկված պայմանագրերի կիրառման ոլորտի և դրանց սահմանման համաձայն՝ հանցագործություն է համարվում.

բ) որևէ այլ արարք, որն ուղղված է քաղաքացիական անձին կամ զինված հակամարտությունների ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին մահ կամ ծանր մարմնական վնասվածք առաջացնելուն, երբ այդպիսի արարքի նպատակն իր բնույթով և համատեքստով հասարակությանն ահաբեկելը կամ Կառավարությանը կամ միջազգային կազմակերպությանն սպիպելն է կատարել որևէ գործողություն կամ ձեռնպահ մնալ դրա կատարումից:

Դ. 12.08.1949թ. Ժնևում ստորագրված և Ադրբեջանի կողմից վավերացված Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին կոնվենցիայի 1-ին արձանագրությունը¹² սահմանում է, որ զինված ընդհարման ժամանակ վտանգավոր մասնագիտական պարտականություն կատարող լրագրողները պետք է դիտարկվեն որպես քաղաքացիական անձինք և ենթակա են պաշտպանության նշված կոնվենցիայի շրջանակներում: Սույն արձանագրությամբ նշված է, որ լրագրողները պետք է կրեն նշված արձանագրության երկրորդ հավելվածով սահմանված նույնականացնող քարտ:

Ադրբեջանն, ըստ էության, չի հերքել իր կողմից լրագրողների թիրախավորումը:

Ավելին, Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը 07.10.2020թ. կոչ է արել օտարերկրյա լրագրողներին չայցելել լեռնային Ղարաբաղյան հակամարտության գոտի՝ առանց Բաքվում համապատասխան հավատարմագրում ստանալու¹³:

Ե. 08.10.2020թ. Ադրբեջանի կողմից թիրախային հարված է հասցվել

¹² <https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/Article.xsp?action=openDocument&documentId=6E95E63184FD05C8C12563CD0051E0FB>

¹³ <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9658831>

նաև Շուշիում գտնվող հայկական եկեղեցուն¹⁴

Այս ոճիրի բարոյական կողմը թողնում ենք յուրաքանչյուրի գնահատականին, ինչ վերաբերում է վերջինիս իրավական կողմին, ապա դեռևս 1954թ-ին ընդունվել է **Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիան**, որի 4-րդ հոդվածը սահմանում է՝

1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են հարգել իրենց, ինչպես նաև մյուս կողմերի փարածքներում գտնվող մշակութային արժեքները՝ արգելելով այդ արժեքների, դրանց անմիջական շրջակայքի և պաշտպանական կառույցների օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք զինված ընդհարման դեպքում կարող են հանգեցնել այդ արժեքների ավերմանը կամ վնասվելուն, և ձեռնպահ մնալով այդ արժեքների դեմ ուղղված թշնամական որևէ գործողությունից: ...

4. Նրանք ձեռնպահ են մնում փոխճնշման միջոցով մշակութային արժեքների դեմ ուղղված ցանկացած գործողություն ձեռնարկելուց:

Այս կոնվենցիան վավերացվել է նաև Ադրբեջանի կողմից, ինչը որևէ կերպ հայկական եկեղեցին ոչնչացնելու համար զսպող իրավական կառուցակարգ չհանդիսացավ:

* * *

5. Ադրբեջանի կողմից արգելված զենքի օգտագործումը

Արցախի խաղաղ բնակավայրերում ադրբեջանական զինված ուժերն օգտագործում են արգելված զինատեսակներ, այդ թվում՝ հրթիռներ, արկեր, կասետային արկեր¹⁵:

Ադրբեջանական ռազմական ուժերը գնդակոծության են ենթարկել նաև Հայաստանի Հանրապետության տարածքը, ինչի արդյունքում ունենք ավերվածություններ և զոհեր՝ խաղաղ բնակչության շրջանում¹⁶:

Արցախի բնակչության դեմ ուղղված այս ահաբեկչական գործողությունները կոպտորեն խախտում են միջազգային մարդասիրական իրավունքը:

10.10.1980թ. Ժնևում ստորագրվել է ընդունված զենքի որոշ տեսակների

¹⁴ <https://en.armradio.am/2020/10/08/azerbaijani-forces-hit-ghazanchetsots-church-in-shushi/>
<https://ru.armeniasputnik.am/karabah/20201008/24821282/Novyy-udar-po-tserkvi-v-Shushi-est-postradavshie.html>

¹⁵ <https://news.am/arm/news/605792.html>;
<https://armeniasputnik.am/karabah/20201006/24791106/stepanakert-rmbakocvum-ekasetayin-arkerov.html>;

¹⁶ Տես՝ հղումները՝ <https://armeniasputnik.am/armenia/20200929/24659102/vardenis-zoh-anna-naxdalyan.html>;
<https://www.civilnet.am/news/2020/09/29/%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A5%D5%B6%D5%AB%D5%BD%E2%80%A4-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A8-%D4%B1%D4%B9%D5%8D-%D5%AB-%D5%B0%D5%A1%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE%D5%AB%D6%81-%D5%B0%D5%A5%D5%BF%D5%B8/397265>;
<https://ru.armeniasputnik.am/karabah/20200929/24659243/Azerbaydzhan-primenil-turetskie-besplotniki-v-Vardenise--glava-MID-Armenii.html>;

արգելման կամ սահմանափակման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, որի 3-րդ արձանագրության 2-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ **ցանկացած հանգամանքներում արգելվում է քաղաքացիական բնակչությանը, քաղաքացիական անձանց կամ քաղաքացիական օբյեկտներին ենթարկել բռնկվող զենքի¹⁷ կիրառմամբ հարձակմանը:**

Չնայած այս կոնվենցիան Ադրբեջանը չի վավերացրել, սակայն նմանատիպ իրավական կարգավորում սահմանված է նաև Ադրբեջանի քրեական օրենսգրքով:

Ադրբեջանի քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածը հանցագործություն է համարում միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները զինված ընդհարումների ժամանակ, որպես այդպիսին համարելով՝

116.1 պատերազմ վարելու այնպիսի միջոցների օգտագործումը, որոնք կարող են մեծ ավերածություններ առաջացնել.

116.2 շրջակա միջավայրին դիտարկող լայնածավալ, շարունակական և ծանր վնաս հասցնելը.

116.3 հումանիտար օգնություն կամ խաղաղապահ միջոցառումներ իրականացնողների անձնակազմի վրա հարձակվելը, այդ թվում փրանսպորտային միջոցների, բժշկական գույքի, Կարմիր Խաչի

116.6 լայնածավալ ավերածությունների իրականացում, որոնք պայմանավորված չեն պատերազմական անհրաժեշտությամբ.

116.10 քաղաքացիական բնակչության կամ առանձին քաղաքացիական անձանց վրա հարձակումը, որոնք չեն մասնակցում մարտերին

Սեպտեմբերի 27-ից սկսած Ադրբեջանը օգտագործում է կասետային զինատեսակներ՝ Արցախի քաղաքները թիրախավորելու համար: Սեպտեմբերի 27-ին, 28-ին և հոկտեմբերի 2-ին Հադրութ քաղաքի ուղղությամբ LAR-160 և «Սմերչ» տեսակի կասետային մարտագլխիկներով համազարկային կրակի ռեակտիվ հրթիռների օգտագործումից հետո Ադրբեջանը հոկտեմբերի 3-ին կրկին կիրառել է «Սմերչ» տեսակի համազարկային կրակի ռեակտիվ հրթիռ մայրաքաղաք Ստեփանակերտի և վերջինիս մոտակայքում գտնվող Շոշ գյուղի ուղղությամբ: Կասետային զինատեսակների բավականին լայնածավալ օգտագործում տեղի է ունեցել հոկտեմբերի 4-ին և 5-ին: Ավելի քան հարյուր հատ LAR-160 և «Սմերչ» տեսակի կասետային մարտագլխիկներով համազարկային կրակի ռեակտիվ հրթիռներ են կիրառվել Ստեփանակերտի, Հադրութի և Արցախի այլ բնակավայրերի ուղղությամբ, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտը թիրախավորվել է առանձնահատուկ ինտենսիվությամբ: Ավելին, Ստեփանակերտը թիրախավորվել է նաև «Պոլոնեզ» տեսակի հրթիռների և այլ համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի օգտագործմամբ: Ռմբակոծությունների մասին հայտնվել է ինչպես տեղական, այնպես էլ

¹⁷ Արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է, թե որոնք են բռնկվող զենքերը և թվարկում դրանց տեսակները, այդ թվում՝ հրթիռ, ռումբ, նռնակ, արկ և այլն:

միջազգային լրատվամիջոցների և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից, ներառյալ BBC-ի, Ամնեստի Ինթերնեյշնլի և մյուսների կողմից:

Պարբերաբար հրթիռակոծվում են ռազմական նշանակության օբյեկտներից զգալիորեն հեռու տեղակայված բնակավայրեր, անգամ թիրախավորվում են քաղաքացիական նշանակության ռազմավարական ենթակառուցվածքներ: Նմանօրինակ հրթիռակոծությունների պարբերական բնույթը ակնհայտ է դարձնում այն փաստը, որ քաղաքացիական բնակչությունը և քաղաքացիական օբյեկտները թիրախավորվում են դիտավորյալ: Հետևաբար, Ադրբեջանը, դարձնելով քաղաքացիական բնակչությանը և քաղաքացիական նշանակության ենթակառուցվածքները իր հարձակումների թիրախ, ակնհայտորեն թույլ է տալիս միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումներ և կատարում է պատերազմական հանցագործություններ:

Բացի այդ, օգտագործված կասետային հրթիռները, իրենց բնույթից ելնելով, միանշանակ թույլ չեն տալիս ապահովել ռազմական և քաղաքացիական նշանակության թիրախների միջև անհրաժեշտ տարբերակում, երբ օգտագործվում են քաղաքացիական բնակչության և քաղաքացիական նշանակության ենթակառուցվածքների մոտակայքում, առավել ևս, երբ օգտագործվում են խիտ բնակեցված բնակավայրերում:

Սա նշանակում է, որ Ադրբեջանը խախտում է միջազգային մարդասիրական իրավունքի այն արգելքը, համաձայն որի չպետք է օգտագործվեն այնպիսի զինատեսակներ, որոնք հնարավորություն չեն տալիս տարբերակելու ռազմական և քաղաքացիական նշանակության թիրախները: Այս արգելքը ամրագրված է ոչ միայն 1949 թվականի Ժնևի կոնվենցիաների 1-ին Լրացուցիչ Արձանագրությամբ, այլ նաև հավելյալ նախատեսված է ոչ անդամ պետությունների օրենսդրությամբ, ինչպիսիք են ԱՄՆ-ն և Իսրայելը: Հատկանշական է այն, որ Ադրբեջանը չի ստորագրել և վավերացրել 1-ին Լրացուցիչ Արձանագրությունը: Այդուհանդերձ, դա չի ազատում Ադրբեջանին քաղաքացիական և ռազմական նշանակության թիրախները տարբերակելու սկզբունքը հարգելու պարտավորությունից: Նշված սկզբունքը ճանաչվել է Արդարադատության միջազգային դատարանի կողմից որպես միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը: Ավելին, քաղաքացիական և ռազմական նշանակության թիրախները տարբերակելու սկզբունքը բխում է մարդասիրության տարրական նկատառումներից և հանրային խղճի թելադրանքից, որոնք պարտադիր են բոլոր պետությունների համար զինված հակամարտության ցանկացած իրավիճակում:

Այսպիսի զինատեսակների և հրթիռների պարբերական և մեծածավալ օգտագործումը հստակ ապացույց է, որ Արցախի դեմ իրականացված հարձակումները հանդիսանում են էթնիկական զտման քաղաքականության մի մասը, այն է Ադրբեջանի՝ հայկական քաղաքացիական բնակչության դեմ բռնություն և ահաբեկչություն խթանող միջոցների կիրառմամբ նրանց Արցախից հարկադրաբար տեղահանելուն ուղղված քաղաքականության:

Հետևաբար, խիտ բնակեցված բնակավայրերի դեմ կասետային

զինատեսակների պարբերական կիրառումը հստակորեն խախտում է տարբերակման սկզբունքը և հանդիսանում է Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտում և պատերազմական հանցագործություն:

Ամփոփելով վերոգրյալը կոչ ենք անում Ձեր լիազորությունների շրջանակում իրավական գնահատական տալ նշված իրադարձություններին և խստորեն դատապարտել՝

1. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից վարձկան ահաբեկիչների ներգրավվումը ռազմական գործողություններին.

2. Ադրբեջանի կողմից Հայաստանի և Արցախի (Լեռնային Ղարաբաղի) խաղաղ բնակավայրերի, մշակութային օբյեկտների, եկեղեցու և խաղաղ բնակչության ոչնչացմանն ուղղված պատերազմական հանցագործություն համարվող գործողությունները.

3. Ադրբեջանի կողմից արգելված զինափեսակների օգտագործումը:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝
Արա Զոհրաբյան